

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
/ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ/ ԲԱԺՆԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի նախարարի <<Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման և մասնագիտական հսկողության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> 12.01.2017 թվականի թիվ 5-Ա հրամանի և ՀՀ Լոռու մարզպետի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում 2017 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական եվ մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին 20.01.2017 թվականի N 15-Ա որոշումով ստեղծված մասնագիտական խմբի կազմում հսկողություն է իրականացվել մարզի 35 համայնքներում: Հայտնաբերվել են հիմնականում նույնաբովանդակ խախտումներ, դրանք են՝
  1. Օտարվող, տրամադրվող հողամասերը տրամադրվում են գործառնական նշանակության խախտումներով:
  2. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար օտարվող հողամասերի աճուրդի փաթեթում ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծ չի ներառվում:
  3. ՀՀ կառավարության 28.10.2010 թ. թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքային սեփականություն հանդիսաղող արտավայրերը և խոտհարքները տրամադրվում են վարձակալության առանց համայնքի ավագանու հետ համաձայնեցնելու:
  4. Համայնքում կամ չեն կնքում կամ ոչ բոլոր արոտօգտագործողների հետ են կնքվում արոտավայրերից օգտվելու պայմանագրեր:
  5. Համայնքի մրցութային հանձնաժողովի կազմում մարզպետարանի ներկայացուցիչ ընդգրկված չի լինում:
  6. Համայնքային սեփականություն հանդիսացող վարելահողերը 1 տարի ժամկետով տրամադրվում են վարձակալության առանց համապատասխան մրցույթի:
- Համայնքների ղեկավարներին տրվել են ցուցումներ խախտումները և թերությունները վերացնելու վերաբերյալ, ինչպես նաև տարվել են համապատասխան վերահսկողական աշխատանքներ հետագայում նմանատիպ խախտումները և թերությունները բացառելու ուղղությամբ:
- Հայտնաբերված խախտումները համայնքների ղեկավարների ներկայությամբ քննարկվել են մարզի համապատասխան տարածաշրջանի պատասխանատու փոխմարզպետի մոտ, համայնքների ղեկավարներին տրվել են ցուցումներ խախտումները և թերությունները վերացնելու վերաբերյալ, ինչպես նաև տարվել են համապատասխան վերահսկողական աշխատանքներ հետագայում նմանատիպ խախտումները և թերությունները բացառելու ուղղությամբ:
- <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեղդեգիայի և հողային պետական տեսչության կողմից 2017թ. օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի

1-ը ներառյալ տեսչական ստուգում է անցկացվել ՀՀ Լոռու մարզի Արևաշող, Սպիտակ, Շենավան, Թումանյան, Բագում, Ստեփանավան, Տաշիր, Գյուլագարակ և Պետրովկա համայնքներում: Տեսչական ստուգումների շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Արևաշող, Սպիտակ, Շենավան, Թումանյան, Բագում, Գյուլագարակ համայնքների ղեկավարներին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 02.11.2017թ. կայացված N06 որոշմամբ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առաջարկությունը ընդունվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ կկայացվի համապատասխան որոշում:

- Համայնքի ղեկավարներին տրվել են ցուցումներ կասեցնել առանց պետական գրանցման, առանց մրցույթի հողօգտագործումները, հայտարարել մրցույթներ և օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայամանագրեր:
- Նախկինում տրված պարտադիր կատարման ցուցումների ընթացքը գտնվում է մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ հսկողության տակ և հետևողական աշխատանք է տարվում հայտնաբերված խախտումները վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ:
- Ուժեղացվել է վերահսկողությունը հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու, հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման, հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների, հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման, ապօրինի հողօգտագործման կանխարգելման, կասեցման ուղղությամբ:
- Համայնքներին հանձնարարվել է վարել <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության ստուգումների հաշվառման մատյան>>, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառել վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններին ներկայացնել հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար:
- Բոլոր համայնքներում վերացվել են առանց պայմանագրերի արատավայրերի և խոտհարքների օգտագործումը և դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 28.10.2010թ.-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1477-Ն որոշման պահանջներին համապատասխան: Իսկ հողամասերը ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման, ինչպես նաև քարտեզագրման սխալների ուղղման նպատակով գործերը սահմանված կարգով ընթացք է տրվել և հողամասերը փոխադրվել են համապատասխան նպատակային նշանակության, որոնք ստացել են պետական գրանցում:

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով 2017թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 29 ժամանակավոր սխեմա համայնքներում, Ամրակից, Դսեղ, Մեծ Պարնի, Զիլիգա, Լեռնապատ, Հարթագյուղ, Յաղդան, Կաթնաղբյուր, Արջուտ, Նոր Խաչակապ, Ախթալա/Նեղոց/, Ալավերդի/Հաղպատ/, Դարպաս, Լերմոնտովո, Սպիտակ, Լուսաղբյուր, Մեծավան, Ագարակ, Թումանյան/Լորուտ/, Տաշիր/Լեռնահովիտ, Դաշտադեմ, Կաթնաղբյուր, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Պուշկինո, Գուգարք, Վահագնաձոր, Այգեհատ, Սպիտակ որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

- 30 համայնքում կատարվել է 96 միավոր հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, ընդամենը՝ 45,5454 հա:

- 5 համայնք ունի գլխավոր հատակագիծ, 26-ը՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա ժամանակավոր սխեմա:

- 2017թ. կազմվել և միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Վանաձոր, Տաշիր, Ալավերդի, Լեռնանցք համայնքների բնակավայրերի գլխավոր հատակագծերում առանձին հողամասերի նպատակային նշանակության առաջարկությունները, որոնք ստացել են դրական եզրակացություն:

38.5611 հա հողամաս փոխադրվել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա,

0.382 հա փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտներ կառուցելու և ընդերքօգտագործման նպատակով:

0.6707 հա բնակավայրերի հողերի կատեգորիա, բնակելի և հասարակական կառուցապատման նպատակով:

1.8 հա հատուկ պահպանվող հողերի կատեգորիա հանգստի՝գոտիների և մարզական նշանակության օբյեկտների կառուցման:

Օժանդակվել է համայնքների շուրջ 150 միավոր ջրամատակարարման համակարգերի գույքի և զբղեցրած հողամասերի պետական գրանցման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և դրանք ջրամատակարար ընկերություններին հանձնման աշխատանքներին:


30 համայնքում կատարվել է 96 միավոր հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, ընդամենը՝ 45,5454 հա:  
5 համայնք ունի գլխավոր հատակագիծ, 26-ը՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա:



**Տաշիր համայնքը /Տաշիր / ունի գլխավոր հատակագիծ**  
**Տաշիր համայնքը /զգուղ Լեռնահովիտ/ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա**

Նպատակային նշանակության փոփոխությունը ըստ սեփականության տեսակի


սեփականության տեսակը	միավոր	մակերեսը	համայնքում
համայնքային	33	33.6704	19
պետական	54	11.083	8
քաղաքացիների	8	0.642	8
իր. անձանց	1	0.15	1
ընդամենը	96	45.5454	



Որ կատեգորիայից է փոփոխվել

նախկին նշանակությունը	միավոր	մակերեսը	համայնքում
անտառային	10	1.2793	4
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	3	4.372	3
բնակավայրերի	14	3.90156	9
գյուղատնտեսական	66	35.56354	21
պատմ. և մշակույթի	1	0.013	1
ջրային	2	0.416	2
ընդամենը	96	45.5454	


**Փոփոխության ենթարկված հողերը ըստ նպատակային նշանակության**



**Որ կատեգորիային է անցել**

ներկա նշանակությունը	միավոր	մակերեսը	համայնքում
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	2	0.382	2
բնակավայրերի	4	0.6707	4
գյուղատնտ	1	4.1316	1
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	88	38.5611	12
հատուկ պահպանվող տարածքների	1	1.8	1
ընդամենը	96	45.5454	

**Փոփոխված հողերը ըստ նոր նպատակային նշանակության**



## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ

Ի կատարումն փոխվարչապետի 17.11.2010թ. թիվ 01/16/6718-10 հանձնարարականի կազմվել է տեղեկատվություն մարզում իրականացված հողերի աճուրդային վաճառքի վերաբերյալ:

2017 թ. մարզի համայնքներում օտարվել է 184 միավոր հողամաս 42.12 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2017թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 72.3 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեք օտարված հողամասերի համար կազմում է 30.79 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 392.0%-ը:

2016 թ. մարզի համայնքներում օտարվել է 95 միավոր հողամաս 16.6 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2016թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 45 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեք օտարված հողամասերի համար կազմում է 17 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 378 %-ը:

2015 թ. մարզի համայնքներում օտարվել է 161 միավոր հողամաս 37.3 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2015թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 78.8 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեք օտարված հողամասերի համար կազմում է 30.79 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 256.0%-ը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Հ Լոռու մարզում 2017թ. աճուրդով օտարված հողերի վերաբերյալ

N	Լոտ	Օտարված հողատեսքը (նշանակության)	Օտարված հողի մակերեսը (քմ)	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ)	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը (դրամ)	Աճուրդների քանակը յուրաքանչյուր միավորի համար (տոկոսային արտահայտությամբ %), որոնց օտարման գինը կազմել է կադաստրային արժեքի			
						30%-50%	50%-100%	100%-ից բարձր	Ընդամենը
1		Գյուղատնտեսական	353992.7	26841367.7	19360809.4			48	48
2		Բնակավայրերի	34558.6	29180134.19	23098501.66			118	118
3		Արդյունաբերության, ընդերքագ. և այլ արտ. նշան.	8255.92	3084662.04	2654893			13	13
4		Էներգետիկայի, կապի, տրանսպորտի	3100	814351	316800			4	4
5		Հատուկ պահպանվող	21300	12371040	11246400			1	1
6		Հատուկ նշանակության	0	0	0				
7		Անտառային	0	0	0				
8		Ջրային	0	0	0				
		Ընդամենը մարզում	421207.22	72291554.93	56677404.06	0	0	184	184

### ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

- «Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կառուցապատման իրավունքով տրամադրումը և օտարման կարգի հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշմամբ սահմանված կարգով համաձայնություն է տրվել մարզի համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման և օտարման հողաշինարարական գործերին՝ որոնք իրականացվել են բաժնի աջակցությամբ և անմիջական գործուն մասնակցությամբ: 2017թվականին վարձակալության է տրամադրվել 806.62 հա պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության հողամաս 926.3 հազ. «Հ դրամ վարձավճարով: Ընդհանուր առմամբ 2017 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված **6453.4** հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել **5245.7** հա **10469.4** հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է **10703.0** հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է **102 %**: 2017 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 70591 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 44407.7 հա

141293.4 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է **141465.1** հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է **100.3 %**

- 2016 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 66769.5 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 38076.2 հա 141011.2 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 136059.1 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 96.5 %
- 2015 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 66302.9 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 38881.9 հա 140751.8 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 146454.9 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի և գույքի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 104 %:
- 2014թ. մարզում վարձակալության տրամադրման համար նախատեսված համայնքային և պետական սեփականության 75092.1 հա գյուղ. նշանակության հողերից փաստացի վարձակալության է տրամադրվել 33971.8 հա կամ **45.2%**, **իսկ** փաստացի վարձակալության հանձնված հողամասերի դիմաց գանձվել է 124.08 մլն դրամ, կատարողականը կազմել է 88.1% :

«Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի կողմից «Կառավարության 2010թ. Հոկտեմբերի 28-ի «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի համաձայն հսկողություն է սահմանվել, համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի պարզ գրավոր մինչև 3 տարի ժամկետով տրամադրման և վարձավճարների գանձման նկատմամբ:

Պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործման, պայմանագրերի պետական գրանցման աշխատանքների նկատմամբ վերահսկողության նպատակով մասնակցել ենք մարզի 22 համայնքներում անցկացված մրցույթներին և աճուրդներին:

«ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանուման հետ աշխատանքներ են իրականացվել սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առաջին պետական գրանցման ժամանակ տեղ գտած անճշտությունների վերացման և 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն, տարբեր պատճառներով չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կազմակերպման համար:

Պատրաստվել է տեղեկատվություն և Տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել համայնքների կողմից գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման վերաբերյալ:

Համայնքների կողմից փաստացի վարձակալության տրամադրված հողերի և վարձավճարների համաձայն նախապատրաստվել է համապատասխան տեղեկանքներ, համայնքների բյուջեներում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:



Սեփական եկամուտների հավաքագրման նպատակով կատարվել են այցելություններ համայնքներ և տարվել բացատրական աշխատանքներ, որը կրում է շարունակական բնույթ:

Օժանդակվել է համայնքներում ինքնական կառույցների համայնքային սեփականության ճանաչման և օրինականացման աշխատանքներին:

#### ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- 2017թ. օտարվել է 42.12 հա հող 72.3 մլն. ՀՀ դրամ
- 2016թ. օտարվել է 16.6 հա հող 44.96 մլն. ՀՀ դրամ
- 2015թ. օտարվել է 37.3 հա հող 78.85 մլն. ՀՀ դրամ
- 2017թ. վարձակալության է տրամադրվել 44407.7 հա, գանձվել է **141.5** մլն.դրամ 100.3 %
- 2016թ. վարձակալության է տրամադրվել 38076.2 հա, գանձվել է 136.1 մլն.դրամ 96.5 %
- 2015թ. 37508.2 հա, 146.6 մլն. ՀՀ դրամ 104.2 %

#### ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Համաձայնություններ է տրվել Սպիտակ, Վարդաբլուր, Ալավերդի, Մարգահովիտ, Կաթնառատ, Շամլուղ համայնքներում հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ կատարելու առաջարկություններին:

#### ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 14 հունվարի 2010թ. թիվ 16-Ն որոշմամբ սահմանված կարգի տեղեկացվել է բոլոր համայնքների ղեկավարներին, որ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը, օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրումը իրականացվում է համայնքների ավագանիների կողմից օտարման և օգտագործման տրամադրման հողամասերի չափերի, օգտագործման սահմանափակումների և պայմանների վերաբերյալ համաձայնեցման որոշում կայացնելով, որից հետո սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից կազմված հողաշինարարական գործը ներկայացվում է համաձայնեցման:
- ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի կողմից ստուգումներ են իրականացվում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման նկատմամբ և սահմանված կարգի խախտումով հողօգտագործման դեպքեր հայտնաբերելու դեպքում մեղավոր անձիք ենթարկվում են վարչական պատասխանատվության:
- Լոռու մարզպետարանի կողմից տրվում է ոչ միայն համաձայնություն, այլև ցուցաբերվում է անմիջական օգնություն՝ պայմանագրերի կնքման, կադաստրի տարածքային ստորաբաժանումում պետական գրանցման ներկայացման և վկայականի տրամադրման գործընթացի ժամանակ:
- ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի կողմից ՀՀ կառավարության 2010թ. Հոկտեմբերի 28-ի «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի համաձայն հսկողություն է սահմանվել, համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական

սեփականություն հանդիսացող արտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի պարզ գրավոր մինչև 3 տարի ժամկետով տրամադրման և վարձավճարների գանձման նկատմամբ:

#### ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

- ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ:
- Լոռու մարզի 2017թ. հողային հաշվեկշռի համաձայն համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը կազմում են 190556.4 հա, որից գյուղատնտեսական նշանակության՝ 82385 հա, բնակավայրերի՝ 260.1 հա, Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 1155.5 հա, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1364.4 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1865.9 հա, հատուկ նշանակության՝ 1199.5 հա, անտառային՝ 100086.5 հա, ջրային՝ 2239.5 հա: 100088.7 հա պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերը անհատույց, մշտական օգտագործման իրավունքով տրամադրված են "Հայանտառ"ՊՈԱԿ-ին: Պետական սեփականություն հանդիսացող հողերից 1171.1 հեկտար անհատույց, մշտական օգտագործման է տրամադրված պետական հիմնարկներին և կազմակերպություններին, 4656.8 հա տրված է վարձակալության իրավունքով և բոլոր պայմանագրերը օրենքով սահմանված կարգով ստացել են պետական գրանցում:
- Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250903.9 հա, Բնակավայրերի՝ 16485.2 հա, Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3991.9 հա, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1653.5 հա, Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2402.6 հա, Հատուկ նշանակության՝ 1217.1 հա, Անտառային՝ 100603.4 հա, Ջրային՝ 2606.9 հա:

#### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ

Գյուղատնտեսական նշանակության՝ 250903.9 հա հողերից, որից վարելահող 42038.3 հա, բազմամյա տնկարք 407.7 հա, խոտհարք 35041.3 հա, արոտ 145638.8 հա, այլ հողատեսք 27777.9 հա փաստացի օգտագործվում է, 84953.1 հա, որից վարելահող 32517.9 հա, բազմամյա տնկարք 300.6հա, խոտհարք 20938.2հա, արոտ 29533.2հա, այլ հողատեսք 1663.2 հա:

Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը կազմում են 165950.8հա 66%, որից վարելահող 9520.4հա 22.6%, բազմամյա տնկարք 107.1հա 26.4% խոտհարք 14103.1հա 40.25%, արոտ 116105.6 հա 79.72%, այլ հողատեսք 26114.7 հա 94.%.:

Մարզի անասնազվաքանակի 2017թ հաշվառման տվյալներով մարզում կա շուրջ 140 հազ պայմանական գլուխ անասուն, որոնց արտավայրերի անհրաժեշտ նորմը՝ 140 հազար հեկտար է հետևաբար արոտների օգտագործման վիճակը չի համապատասխանում գործող նորմատիվներին:

## ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օժանդակվել է համայնքների շուրջ 150 միավոր ջրամատակարարման համակարգերի գույքի և զբաղեցրած հողամասերի պետական գրանցման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և դրանք ջրամատակարար ընկերություններին հանձնման աշխատանքներին:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման, օժանդակվել է բնակելի տարածքների նվիրատվության գործընթացին:

Օժանդակվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի զբաղեցրած հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերության գործընթացին:

Իրականացվել է Լոռու մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման աշխատանքները և համայնքներին է տրամադրվել գնահատման քարտեզների էլեկտրոնային քարտեզները և տեղեկագրերը:

## ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ

«Մաքուր Հայաստան» գործողությունների ծրագրի շրջանակներում գույքագրվել է մարզում գոյություն ունեցող աղբավայրերը, որոնք տեղադրվել են [www.map.transproject.am](http://www.map.transproject.am) կայք-էջում : Նույնականացվել է փակված աղբավայրերի և հիմնական թողնված աղբավայրերի լուսանկարները և ՀՀ ՏԿՁՆ է փոխանցվել ճշգրտված տեղեկատվություն: Ապահովվել է [www.map.transproject.am](http://www.map.transproject.am) կայքում տեղադրված փակված աղբանոցների լուսանկարների համապատասխանելիությունը իրավիճակին:

Գույքագրվել է գազի և բենզինի լցակայանների հնարավորությունները, մարզում առկա է 73 լցակայաններ, որից 37 բենզալցակայան և 36 գազալցակայան: Ըստ հաստատված նորմատիվային պահանջների, դրանցից 63-ը ունեն սանհանգույցներ և հասանելի են ՀՀ քաղաքացիների և զբոսաշրջիկների համար: 10 բենզալցակայան չեն բավարարում նորմատիվային պահանջներին և չունեն սանհանգույցներ: Հանձնարարվել է համայնքների ղեկավարներին կարճ ժամկետում դրանք համապատասխանացնել նորմատիվային պահանջներին և կառուցել սանհանգույցներ:

## ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կառուցապատման իարվունքով տրամադրումը և օտարումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 16-ն որոշմամբ սահմանված կարգով իրականացման լիարժեքությունը: ՀՀ կառավարության 2010թ. Հոկտեմբերի 28-ի «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի համաձայն համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի պարզ գրավոր մինչև 3 տարի ժամկետով տրամադրման գործընթացի ապահովումը:

“Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին” ՀՀ օրենքի համաձայն համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող բոլոր հողերը

ընդգրկվել են սահմանակից համայնքների վարչական սահմաններում, սակայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անհրաժեշտ հսկողություն չի սահմանվում հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու, հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման, հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների, հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման, ապօրինի հողօգտագործման կանխարգելման, կասեցման նկատմամբ:

Համայնքներում անբավարար վիճակում է գտնվում համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների և համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության իրավաբան տրամադրման աշխատանքները:

Համայնքները չեն վարում <<հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության ստուգումների հաշվառման մատյան>>, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ չեն կիրառում վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններին չեն ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Հողերի նպատակային նշանակության փոփոխման արդյունքում և հողամասերի օտարումներից առաջացող ֆինանսական միջոցները առաջնահերթությամբ չեն ուղղվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմմանը:

Անհրաժեշտ է

Ուժեղացնել վերահսկողությունը հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու, հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման, հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների, հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման, ապօրինի հողօգտագործման կանխարգելման, կասեցման ուղղությամբ:

Հողաշինության և հողօգտագործման  
բաժնի պետ

Ա.Օհանյան